


ՔԱՐՏԱՆՈՐԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆ

Պաշխարիոյ համար	12
Տարեկան	3ր.
Վեցամսեայ	6 »
Արժույթի համար	15 »
Վեցամսեայ	8 »

Անկրկայի համար	3
Տարեկան	3ր.
Վեցամսեայ	1.50 »

Մանուցումն տղր ասու  
 քին երեւիսն համար 40 ս.  
 իսկ վերջին երեսի հա-  
 մար 20 սանթիմէ Է. երե-  
 ին անջի անգամներու  
 համար 20 0/0 զեղչ կըր  
 յայտ  
 Վանայի համար մ.ոքի 40 սանթիմ



R. P. Kalémcarian, Mechitaristengasse  
 (Aubriche) W. 4.  
 Vienne

Նախկին և նորագոյն  
 համարներու համար  
 ցիւցիւն

Редация на вѣстникъ  
 „Шаржумъ“  
 Варна

Redaction du journal  
 „Charjourn“  
 Varna (Bulgarie)

Արժույթի համար  
 մեքէ  
 ) 20 ՍԱՆԹԻՄ ( )  
 Պաշխարիոյ համար  
 մեքէ  
 ) 15 ՍԱՆԹԻՄ ( )

Գրութիւնք և յեւ տրուի

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ  
 ԿԸ ՀՐԹՏՐԱՎՈՒԻ ՉՈՐԵՔՆԱԲԹԻ ԵՒ ՇՈՐԱԹ ՕՐԵՐԸ

ՇՈՐԱԹՈՒՄ Ի ՔԱՐՏԱՆՈՐԻ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵՂԻՆԸ ՊԵՏԻ Է ԿԱՆՆԻԿ ՎՃԱՐԷ

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ՑԵՆՁԸ

Ո եւ է կազմակերպւած մարմ-  
 նի պատկանելու կամ նրա-  
 նում դեր ստանձնելու հա-  
 մար ամեն մի անհատ պարտա-  
 ւոր է ունենալ որոշ բարոյական  
 և մտաւոր բարձրութիւն ու զո-  
 հողութեան ընդունակութիւն,  
 որպէսզի այդ մարմինը կարո-  
 յանայ իր վրա ստանձնած գործը  
 կատարել և անհատը իր պաշտո-  
 նը, ընդունակութիւնները,  
 զոհողութեան, մտաւոր և բարո-  
 յական բարձրութեանց չափը  
 կոչվում է ցենզ եւրոպական լեզ-  
 ւով. որքան ընկերութեան նը-  
 պատակը վեճ ու բարդ է լինում,  
 այնչափ էլ նրան պատկանելու ու-  
 ղող անհատները դէժ բարոյա-  
 կան, մտաւորական ու զոհողու-  
 թեան մեծ չափ, այսինքն մեծ  
 ցենզ է գրվում:

Յեղափոխական մարմինները  
 լինելով ամենազարգացած և  
 ամենաբարդ գործունէութիւն ու-  
 նեցող կազմակերպութիւններ, ա-  
 մենամեծ զոհողութեան ընդու-  
 նակ և մտաւորապէս ու բարոյա-  
 պէս բարձր աստիճանի վրա գտ-  
 նըվող անդամներ ունենալու ան-  
 հրաժեշտութիւնը ունեն. նրանք  
 ներկայացնում են ժողովրդի ա-  
 մենաբարձր իգէտները իրագոր-  
 ծողները, ուստի և պարտաւոր  
 են իրենց մէջ բերելուցնել ժո-  
 ղովրդների ամեն կողմով բարձր  
 տարրը. եթէ հակառակը վար-  
 վեն, ժողովուրդները փոխանակ  
 վերածնվելու բոլորովին կը կոր-  
 ծանվեն, իսկ իրենք յեղափոխա-  
 կան մարմինները ժողովրդների  
 համար փոխանակ փրկիչներ հան-  
 դիսանալու, կործանիչներ, ժո-  
 ղովրդներին դէպի կորուստ ա-  
 ռաջնորդողներ կը դառնան:

Դաշնակցութիւնը ահա այս  
 հիմնական սկզբունքներով զեկա-  
 վարվելով այսօր, երբ մամանա-  
 կը հասած է համարում իրանգամ  
 ներքին հանդէպ շատ խիստ ընտրո  
 ղութիւն կատարել որոշել է ցեն-  
 ջի ենթակարգել իրեն հետ միանալ

ձգտող հայերին և արդէն իրեն  
 մէջ գտնվող անհատներին և մար  
 միններին:

Դաշնակցութիւնը դեռ շատ ա-  
 ռաջ ըմբռնել էր բարձր ցենզի  
 օգտակարութիւնը, սակայն մին-  
 չեւ օրս չէր կարողացել իր ըմ-  
 բռնումը գործնականի վերածել,  
 որովհետեւ հայ ժողովրդի յեղա-  
 փոխական տէմպերամէնտ ունե-  
 ցող տարրը բարոյական ու մտա-  
 ւորական տեսակէտով մի տեսակ  
 խառնիճուղան էր ներկայաց-  
 նում: Այսօր մեր կեանքը բարե-  
 փոխվել է, մեր յեղափոխական  
 տարրը ամեն կերպով զտված  
 տարր կարելի է ընդունել, կա-  
 բրելի է ամբողջական տիպերի  
 հանդիպել, այդ պատճառով էլ  
 Դաշնակցութիւնը ցենզ է նշանա-  
 կել անմաքուր տարրերի մուտքը  
 կազմակերպութեան մէջ փակե-  
 լու և եղածներին դուս վանելու  
 համար:

Այսօր ամեն մի հին և նոր  
 դաշնակցական անհատ և մար-  
 մին պարտաւոր է նշանակված ցեն-  
 ջի համաձայն վարվել, բարո-  
 յական բարձրութիւն և զոհողու-  
 թեան ընդունակութիւն ունենալ,  
 եթէ չին ուզում լըրել անհատ-  
 ներ դաշնակցութիւնից դուրս  
 համարվել, և իբր մարմիններ  
 իրենց նախորդ իրաւասութիւն-  
 ներից զրկվել Դաշնակցութեան  
 գործերի մէջ:

Մենք ստոյգ աղբիւրից տեղե-  
 կանում ենք որ Պաշտանեան Կ.  
 Կոմիտէն որոշած է ամենաճիշդ  
 կերպով իրականի վերածել Դաշ-  
 նակցութեան նշանակած ցենզը  
 իր շրջանի մէջ, և նա այդ ուղ-  
 ղութեամբ գործը անմիջապէս  
 սկսելու համար սպասում է միայն  
 պաշտօնապէս որոշումները ստա-  
 նալուն:

Աւստի մենք աւելորդ չենք հա-  
 մարում հրաւեր կարող ըլլոր  
 դաշնակցական ընկերներին, խմ-  
 բրին և մարմիններին որ օր  
 առաջ աշխատեն իրենց շար-  
 քերը մաքրել մեր ցենզին չը  
 համապատասխանող տիպերից և  
 կազմ ու պատրաստ լինել նոր

ցենզին համապատասխանելու,  
 եթէ ուզում են հայ յեղափոխու-  
 թեան և Դաշնակցութեան պա-  
 տիւր բարձր և դրօշը մաքուր մը  
 նայ միշտ:

ՎՍՈՂՈ  
 ԹՈՒՐԻՔ-ՊՈՒԼԿԱՐԱԿԱՆ ՀԱՄԱ-  
 ՁԱՅՆՈՒԹԵԱՆ ԲՆԱԳԻՐԸ

1. Պուլկարիոյ իշխանութիւնը կը  
 պարտաւորուի արգելք հանդիսանալ  
 յեղափոխական կոմիտէներու և հրո-  
 սախմբերու կազմակերպումին իր նա-  
 հանգներուն մէջ և հալածելու այն  
 պուլկարահպատակները որոնք Թուր-  
 քիոյ դրացի նահանգներուն մէջ ըմ-  
 բռստական գործեր կատարելէ վերջը  
 կը փախին Պուլկարիա և Արեւելեան  
 Թուրքիի:

2. Պուլկարիան պիտի արգիլէ զը-  
 րացի թրքական նահանգները պայ-  
 թուցիկ նիւթեր, թոյն և առողջու-  
 թեան այլ վնասակար նիւթեր մըտ-  
 ցնել:

3. Այն բարենորոգումները որոնք  
 նախագծուած են ըստ Էւստրո-Ռուսա-  
 կան համաձայնութեան, Սեւանիկի,  
 Իւսիլիպի և Բիթլիոյ նահանգներուն  
 համար, պէտք է իրագործուին, նաև  
 ընդհանուր ներուժը, զոր Սուլթանը,  
 իր մեծ զթասրտութեամբ որոշած է  
 ամբողջովին պիտի գործադրուի:

Ամենքը, որոնք ուղղակի կամ ա-  
 նուղղակի կերպով խառնուած են ա-  
 պստամբական գործերու և կամ թէ  
 կատարածով քաղաքական յանցանքե-  
 րու համար քաղաքական և դատապար-  
 տուած են պէտք է որ ներուին: Այդ  
 ներման չը պիտի ենթակուին միայն  
 անոնք, որոնք ուժանակով խորտա-  
 կած են նաւեր, կամուրջներ, երկա-  
 թուղիներ, հանրային շինութիւններ  
 և արդէն դատապարտուած են:

4. Թուրքիայէն Պուլկարիա փա-  
 խած քրիստոնեաները որոնք կալ-  
 ուածական վնասներ կրած են, իրենց  
 քնակավայրերն վերադարձած ատեն-  
 նին իրենց բնակարանները վերաչի-  
 նելու համար նպաստ կընդունին  
 Թուրք իշխանութիւնէն և կը վերստա-  
 նան իրենց հողերը:

5. Մասնաւոր դաշնագրութիւն մը  
 պիտի կնքուի սովորական յանցու-  
 ւորները ու փախստական զինուորե-  
 րը իրարու յանձնելու: Սահմանա-  
 գրուիներու վրա Թուրք և պուլկար  
 խառն զինուորական ու քաղաքական  
 պատժանքներ պիտի նշանակուին աւա  
 զակներուն ու հրոսախմբուին սահ-  
 մաններէն անցնելու արգիլելու համար:

Այս նպատակին հասնելու համար  
 ասանձին համաձայնութիւն մը պիտի  
 կայացուի: Պիտի կազմուի յանձնա-  
 խումբ մը երկու կողմէրէ թեանց  
 մէջ առկա մնացած խնդիրները կար-  
 գադրելու համար, և այդ կազմուելիք  
 յանձնախումբը իսկոյն գործի պիտի  
 ձեռնարկէ:

6. Վերջերս Թուրքիոյ կողմէն  
 պուլկարական ապրանքներու հանդէպ  
 տրուած մաքսային արտակարգ մի-  
 ջոցները պիտի վերացուին և գործա-  
 դուրս նախկին հրահանքները: Եր-  
 կաթուղային հաղորդակցութիւնը ա-  
 զատ պիտի ըլլայ պուլկարահպատակ  
 օրինաւոր թղթեր ունեցողներուն  
 հանդէպ, որոնք գործով Թուրքիա  
 կերթան, ոչ մէկ արգելք չը պէտք է  
 ըլլայ:

7. Պուլկարները, ինչպէս և առաջ  
 էր, ըլլոր միւս թրքահպատակներու  
 նման պիտի կարենան դատական և  
 վարչական պաշտօններ ստանձնել,  
 բաւ է որ ընդունակ ըլլան այդ պաշ-  
 տօնները կատարելու:

Այս բնագրին կցուած է արձանա-  
 գրութիւն մը ստորագրուած երկու  
 պայմանաւորութիւններու կողմէն իրա-  
 գործելու համար 1) սահմանազուխ-  
 նեքը ապահովելու համար միջոցներ,  
 2) Փօստային և հեռագրական գործու-  
 նէութեան կարգաւորում, 3) Ոճրա-  
 գործներու և փախստականները փո-  
 խադարձօրէն իրարու յանձնում, 4)  
 Պայմաններ զինուորական ծառայու-  
 թեան: 5) Որոշում Պուլկար և Թուրք  
 վաճառականական գործակատարներու  
 իրաւանց և իշխանութեան: 6) Կար-  
 գադրութիւն երկաթուղիներու ապա-  
 դայ միացման համաձայն պայմանա-  
 ւորուող կողմերու շահերուն:

Բեֆ. րմ. Թերթը այս համաձայնու-  
 թիւնը գոհացուցիչ չի գտնար, Պուլ-  
 կար-Թրքական ընդհարումը խուսա-  
 փեցնել տալու համար, իր համոզումը  
 յայտնելով որ Մակեդոնացիք չը պի-  
 տի հանդարտ կենան, եթէ բարենո-  
 րոգումները չիրագործուին Պուլկա-  
 րիան չը պիտի կարենայ իր խոս-  
 տուիները կատարել Թուրքիոյ հանդէպ  
 և Թուրքիա բարոյական իրաւունք  
 պիտի ունենայ Պուլկարիոյ հետ իր  
 հաշիւները մաքրել:

ԹԱՏԵՐԱԿԱՆ

Անցեալ շաբաթ երկուրորէն Պա-  
 պայանի ղեկավարութեամբ շնա-  
 տէժաա՝ դերասանական խումբը  
 ներկայացուց Պիամե լիազարդ

... անհրաժեշտ է հարկադրել նրանք, որոնք անհրաժեշտ է հարկադրել նրանք, որոնք անհրաժեշտ է հարկադրել նրանք...

Այս ներկայացումները անսովորաբար վերջը այն եզրակացություններ են հանգում, որ տիրակալները, որոնք անհրաժեշտ է հարկադրել նրանք...

Կրթիչը անհրաժեշտ է հարկադրել նրանք, որոնք անհրաժեշտ է հարկադրել նրանք, որոնք անհրաժեշտ է հարկադրել նրանք...

Նախ պետք է ըստ լուրջ գոմիք մը եւս կրնայ հասարակութիւնը կրթել, և «նախնական» խումբը պետք է աշխատի իր լուրջ խաղերէն վերջը կրթիչը գոմիքական պատկերներ ներկայացնել հասարակութեան, բայց ոչ օրինակաբար պատկերներ, սինիկ պատկերներով ու խօսքերով։ Իսկ եթէ ազատութեան անկարելի է, մենք գոնէ կը պահանջենք որ Տիկին Յակոբեան, Պապեան և այն պարոնները որոնք նախ լուրջ գերբու մէջ կը ներկայանան հասարակութեան, երբեք թող չը տան իրենց քանի վայրկեան վերջը նոյն բեմին վրայ գալ գրեթէ իր մտններու գերբու մէջ, իսկ գերբուներու, իսկ իր

Ինչո՞ւ յարկադրել նրանք, որոնք անհրաժեշտ է հարկադրել նրանք, որոնք անհրաժեշտ է հարկադրել նրանք...

Սուտի հասարակութեան կը թեւադրենք լուրջ և ուշիմ ըլլալ և այնպիսի դիրք մը բռնել, որ «նախնական» խումբը վերջը նախնական պատկերներ ներկայացնել հասարակութեան մէկ կարեւոր մասը կուզէ որ գերտեսնական լուրջը իրեն պատճառեն հոգեկան բարձր գոհացումներ և ոչ թէ անտեսական բնագոյններու զրգիւններ...

Ներկայ մը

### ԳՐԻԳՈՐ ԱՐԾԻՈՒՆԻ

ՄԵԼԱԿԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒՄԷՆ ԱՌԱՋ

(Շար. Ասիոց քիւնի)

Այսպէս Գրիգոր Արծրունի, ուսանողութեան մեկնելէն աւելի մը վերջը, հայ գրականութեան աստղագիտութեան կերտիչ, արդէն կազմակերպութեամբ, ունենալով իր անխախտ սերունդները, իսկապէս իր մտքին մէջ սահմանած է շրջանակը ուր պիտի պարսփակէ իր բոլոր գործունէութիւնը. իր հայ պատի գործ միսիայն հայութեան համար. Ասկէ կերտայ որ Արծրունի անսխալ մտքին ազգայնական մըն էր։ Ասիկա ըսել չէ սակայն որ, ազգամոլ էր ան։ Ընդհակառակը, կը քարոզէր որ ամէն գործիչ իր պատկանած ազգութեան շրջանակին մէջ գործէ այնպէս ինչպէս ամենէն յոռաշարժ մարդկային քաղաքակրթութիւնը կը պահանջէ. այսինքն ջնջել փոստած նախապաշարունակները, կեղծ ազգասիրական սնամէջ ձգտումները, օգտուել եւրոպական քաղաքակրթութիւնէն, ժամանակակից գիտութեան և արտեստի բարիքներէն։ Սրբ ամէն

գործիչ իր ազգային շրջանակին մէջ այս արդիւնքը կը յաջողի ձեռք բերել ընդհանուր մարդկութիւնը հաւատարմութեամբ կը զարգանայ և ազգութեանց սանդուխտ վրայ չեն կրնար այնչափ անեղ զանազանութիւններ գոյութիւն ունենալ, որոնք այսօր բազմաթիւ զգալի թիւով ծնունդ կուտան։ Մասնաւոր մեղ նման ազգերու համար աշխարհաքաղաքագիտութիւնը կամուսոր ընտելում կը նշանակէ, չաղաքակրթութեան օրդի պայմաններուն մէջ, Ուստի և Արծրունի, իր հրապարակախօս հայ մասունքին մէջ իրենց օրէն ազգային ինքնաճանաչութեան ամենէն ջնքմախոյանը հանդիսացաւ, որուն նըման շատ քիչը ատենուցան։ Այս պարագան կրնայ չօտփելի օրինակ ըլլալ մեր այն ուսանողութեան, որ աւելինը պատաստար հանգամանքներու մէջ ապրած ըլլալով հանգիւս. փոյթ չեն ընէր իրենց ազգային կեանքով զբաղելու, իրենց պատկանած չեղին օգտու մատուցանելու, և նոյնիսկ կարհամարեն վայն, չեն սորվիր իրենց մայրենի լեզուն կամ տոհմային գրականութիւնը։

Արծրունի կուզէր իր ազգին ծառայել. ատիկա անկասկածելի է։ Բայց ինչպէ՞ս։ Հասարակութեան մը մէջ ծառայելու համար, պետք էր հասկնալ անոր լեզուն և յետոյ, կարենալ այդ լեզուով իր գաղափարները արտայայտել։ Արդ Արծրունի հայութեան կրնար հայերէն խօսել, իսկ գրել բնաւ։ Շատերու համար այս պարագան ինքնին պիտի բաւէր պարզապէս գործիչը յուսահատեցնելու։ Արծրունի համար, ընդհակառակը, խթան մը կըլլայ իր հայրենադիտութիւնը գարգացնելու։ Լեզուն հետ պէտք կը զոյգ սորվելու նաեւ իր ցեղին պատմութիւնն ու մատենագիտութիւնը, որոնց համար կուենայ վիճանական և վեհապիկեան Միթիթարաններու պէս վարպետներ։ Ժամանակի գործը գոնէր սորվելու համար հայերէն լեզուն, ապա իրեն կորուստ չէր նկատուի։ Լեզուն մասին ալ, ինք իր հաստատուել սկիզբունքներն ունէր, իսկ ազգասիրաբար չէր որ իր լեզունն ուսումը կը պարզեցնէր. այլ այդ լեզուն խօսող հասարակութեան օգտակար հանդիսանալու համար. պարզ է որ մարդ իր լեզուով աւելի շնորհակալ կըլլայ մտքի, սրտի բոլոր նրբութիւններն հասկնալու և հասկնելու քան թէ օտար լեզուով։ Ամէն ազգ իր

### ԱՐՄԱՆԱՅԻՆ ԶԱՅՄԻՔՆԵՆ

Երբ մտնել 601 թիւը, մայրէքի մարտի 2-ին գլխաւոր մը տխուր պարտականութիւնը կատարած էր։ Սեր պան նախազգացումներ հետզհետեւ լական անողօք ուղիին մէջ մտած են։ Օր մը հայ-թիւրքի մը (իրք թէ) մէջ «Սարտա» հայ ժողովուրդը «Սուկա» հայ ժողովուրդը քսանհեզուցիչ քաջութեամբ իրենց կարողացինք, սակայն հիմա է որ պէտք է ճշմարտապէս սարսանք, զարհուրիք ու սուկանք։ Սեր դժբաղէ հայրենիքի պէկառու տեսարաններու տառիկ վարագործը անհավայրագօրէն բացուած է, Սասունին շատ մտիկ Յունանցի զբաղող վերջին վրայ։ Սրբ մենք արտասահմանի մէջ բարեկեցիկներ կը տեսնենք, հոն ձմեռան ստանալու նեղանակին այդ հէջ հայ գիւղը կատար վարագործութիւններու էն քսանհեզուցիչ կը ծրարուէին, այդ փոքրիկ գիւղին մէջ ճէն սկսեալ մինչև 80 անուշ հայ կանանց պատիւը Մանգլակա վրէժի զոհութեան մատուցած է, մէջիւ այն աստիճան արհաւիր լից որ թշուառ ծնողներ, ձգելով իրենց սրտի հատոր ձագուկները փոխած են։ Նորէն լոյս արեւի տակ յայտնի համարակ ըսկուած է արիւնտ համարարած սեւ կեղտեր։ Ինչչափ քսանհեզուցիչ արձանագրուած են։ Յաւելուածի աննէ վերջը սա հակիրճ տողերը ամենէն պիտի խօսու ու ազգեցիկ կոչըրը են մեր նահատակ հայրենիքին, որ կուգան դաշոյնի պէս միտի մեր սրտերուն։ Մուշի թիւթի կայրեկողութիւնը, կրօնական ու քաղաքական ժողով անդամները հետագիւր մը զրկեցին Սուլթանին... Բիլլիքի դատաստանական իշխանութիւնը քրատան ըստացեր է գանձը (բողբոջները) հետապնդելու, որովհետեւ անոնց օգրպարտիչ մասունքիւն ու յարամով վաճառու են ունեցած են թիւթի վրէժ Մարտի հետագիւրը քանի մը հայ գիւղերու վրայ նոր յարձակումներ գլխած, իսկ ԱՅ Մարտի Պոլսէն հետագիւրը, չորրորդ զօրաբանակին Սասնը

լեռները ապաստանած հայերու վրայ երթալը : Այստեղ կրկին անգամ հանգրիսա ապրող հայեր , պատանա- կան կարեկցութիւններու , կոկորդի- րոսի կնիքը արցունքներու ժամանակը չէ այլևս , Հայաստանի ար/ւնոտ բա- րեկենդաններէն վերջ կրկին ար/ւնոտ գատիկն է որ յաջորդած է :

Յէտայի իրոքսու ձայնը , թշուառ ժողովուրդի ահակի վայնասունի ձգ- նաժամերու մէջ ունեցած վերջին յոյ- սիրը մեր վրայ սուսեւած են . ցնցուե- լու , ինքնաճանաչութեան պաշտ ամե- նէն գերազանց ժամանակը հիմայ է : Հայրենիքի մէջ թշնամիին դէմ կուրծք պարզած աննման քաջերուն , անոնց մահացումէն վերջ , ողբալ իրենց կո- րստին վրայ կեղծաւորութիւններու ամենէն զլուսելին պիտի ըլլայ :

Հեռու կուսակցական նեղ հաշիւ- ներ , հեռու ետաբրական ազոտոտ էնթրիքներ , այն ամէն հայ որ իր կուրծքին տակ մարդկային սիրտ մը կը կրէ , թող անապարէ իր ութերու ներածին չափ իր պարտքը կատարել : Կիրքերով կուրացած աչքեր թող բացուին , ու անտարբերութեան դա- տապարտելի թմբուցեան մէջ խար- խարտը սրտեր պահ մը իրենց ակնաշ- ները բանան : Կայրենիքի անլուր գա- լարումներուն հանդէպ , ու անոր ճի- ղերու առեւն , մարդկային ընկերու- թեան իր արժանաւոր անգամ ներ- կայանան , վտանգը սոսկալի է և ընդ- հանուր : Իսկ երբ այս դառն ժամե- րուն մէջ պիտի գտնուին մարդիկ ո- րոնք ստոր հակադարձութեան փրո- փականտը առաջ վարուե սիրտ պիտի ունենան , մեր թուրք աշխարհներու ազոտու ճակարակն ու սեւ դէմքին Մեր մասուրը անխոր կերպով պէտք է արձագանքէ , հայրենիքի այս աղեկէզ կոչերը , կտրելով անսահման տարա- ծութիւններ թող հասցնէ աշխարհի հինգ մասերու մէջ ապրող բոլոր հա- յոյքիներուն , որպէս զի երակներուն մէջ դոնէ կաթիլ մը հայու արիւն ու սրտին մէջ նշոյլ մը հայրենասիրու- թիւն , ունեցողներ ցնցուին ու փոռ- թան ու փոռթացնեն իրենց միջոց- ները , հայ աշխարհի այս երկուքի դառն ժամերուն :

Հարիւր հազարներով դիակները աւելան չեն յապկոցած կարիքի Գազանի կառավարութեան արիւն- խում պաշտօնեաներու և մուսուլմա- յաւորի ծնունդներու կարեւոր ար- խարձակները , և սրուն հանդէպ եւ- րոպեան դիւանագետներու շրջանակը ձեռնալ նստած , անորք հանդիսա- տեան ստոր զերը կը կատարէ :

Կոնկ մենք գիտնա՞ք մեր պարտ- քը կատարել , չթողու՞նք որ անպա- արիժ կերպով մեր սիրելի հայրենիքը մեր ազգութեան վերջին գերեզմանին վերածեն : մեր յեղափոխական գոր- ծունէութիւնն է որ պիտի սանձէ ան- զուպ ու անուղղայ գազանը և ստիպէ դիւանագիտական շրջանակին լուրջ լուծումի մը հանգեցնել մեր արդար բողոքը : Գուպան , Կրեպէն ու Մակե- զանիան օրինակներ մեզի :

Ալլիսի-Որդիկ ը

ԹՂԵԱԿՑՈՒԹԻՒՆ

ՆԱՍՏԱԿ ԱՍՆԵՐԻԿՑԵՆ

Նէշուէ , 5 ապրիլ 1904

Պորիս Սարաֆօֆի (Բրո Արմէնիա)ի միջոցաւ հայ ընկերներուն—մասնա- լորապէս դաշնակցականներուն—ուղ- ղած սիրալիր նամակը եւ «Բրո Արմէ- նիայի համակրելի խմբագիր Ժանօթ իսյասէր Պ. Գրաթի ու Դաշնակցու- թեան եւրոպայի ներկայացուցիչ Տօք- Լօրիս Մելքոնովի Գիլիպէ այցելելը եւ երեք հարարէ աւելի անգիրի բազմ- մութեան մը—այս թէ պուրկար—հա- մակրութեան արժանանալը , մեծ ի- րարանցում յառաջ բերու Ամերիկա- յի Ալլիսիստներու միջեւ , եւ ինչպէս իսպանի վերջին դաշնակցական փա- ռաւոր կուրները եւրոպայի պալատին , ճաշարաններու եւ արձարաններու մութ անկիւնները սկսած են պառա- լակտն , նախատական խօսքեր ընել վերոյիշեալ երեք անձնաորութիւն- ներու հասցէին :

Արիւրի ձագուկ եւ Սուլթանի հաւատարիմ այս ծառաները , կու- սակցական շարժախանձ ոգիով այն-

պէս կուրացած են որ , այլևս ինչ ընելիքն չգիտեն . աջուճախ ցելի կը չպրտեն օտար բարեկամներուն ու կը ջանան գտնուի վարկաբեկի :

Պատգովի մէջ հրատարակուող «Ձայն վայրենիաց» բուռած հայտարարու- թի խմբագիր Սուրէն Պարթեւեան հրէշն (Չօպանեանի բառով խօսինք) սրեւակներ կը սեւցնէ մրտախու հա- մար հայ դատին օտար բարեկամները- իրեն զբաղէտ հարով «Բրո Արմէ- նիայի քաղաքացիութիւնը կը քննադատէ . եւ պահիկայ կը պարտաւէ , Բրո Արմէնիայի ներկայ ուղղութիւնը «Բրո Դաշնակցական» ուղղութիւնն է կը յայտարարէ , վերջապէս այս հրէշը եւ իր ոչխարածիտ հետեւորդները հայկական բառարանին մէջ բառ չը մնայ որով չորակէին Սարաֆօֆ եւ Գրաթը : Եւ ինչո՞ք համար արդեօք , միթէ իրօք այդ մարդիկը այդպիսի վատե՞ր են . այո՛ , անոնց համար վատ է Սարաֆօֆի նման դիւ- ցազն երիտասարդ յը , որ երբ թշնա- մին կուգայ իր երեսին ապտակ մը զարնելու , իսկոյն միւս երես չը գարձներ , վատ է Սարաֆօֆի նման հայրենասէր երիտասարդ յը որ երբ թշնամին կուգայ իր ստացուածքը տանելու—աղչիկն ու կին ալ վրայ չարար : վատ է մէկ խօսքով , որով- հետեւ անպատմա է , բռնութեան դէմ բողոքողներէն է եւ իրենց նման ճամակերպական չէ : Անոնց համար վատ է Գրաթի նման համակրելի անձ նաւորութիւնն է , որ երբ լուրջ կար- միր Սուլթանին ի գործ դրած հարս- տահարութիւնները կը նշաւակէ , վատ է որովհետեւ հայկական դատին համար եւրոպայի մէջ միջոցներ կը սարսիկ : առանց փոխարէն բան մը սպասելու , եւ կը ջանայ միջոց մը գտնել արմատախիլ ընելու համար այն բարբարոս սխտէ՛մ որ կը սիրէ թուրքիս կոչումը երկրի մը մէջ :

վատ է որովհետեւ իրենց նման ձեռ- քերին ծալած նստած չէ . եւ պաղա- նի գործելու պատրուակին տակ ժո- ղովողէն դրամ չը չորթին ինքնիքը ապրեցնելու համար , ու վերջապէս մէկ խօսքով իրենց նման երէկի սի- րած , համբուրած ընկերները , այ-

սօր կուսակցական նեղ ու զգոյր կրքի համար դաշոյնի մը եւ կամ ա- րձանակի գնդակի չի գոհ տար Լօն- ասօնի , Փօթիի եւ Օսէասի փողոց- ներուն մէջ , կարհամարէ փոքրիկ հրէշային արարքները եւ զքրական թայֆայականութեամբ կուրացած ա- չիքթիական վրէժխնդրութիւնս կ'ան- ւանէ :

Այո՛ , Ալլիսիստները կը հայհոյին , կը պարտաւէին , կը վարկաբեկեն այդպիսիները եւ բնաւ չեն ուզեր վայրկեան մը անգամ խորհիլ թէ ինչ է որ կը ընեն . ու մեզի համար Ալլիս- րիստներու կողմէն այսպիսի անխիղճ եւ յիմար յարձակումներ մեր օտար բարեկամներու նկատմամբ , նորու- թիւն մը չէ եւ ոչ ալ անակնկալ մը . մեզի համար դեռ շատ թարմ է Ուստ քի Ալլիսիստ դաւադիր ջողներու այն մէկ յարձակումը որը ի պործ գրին , մօտաբարպէս երկու ու կէս տարի առաջ Ուստի մէջ , ծանօթ հայասէր Իւուպէն կօհիէի վրայ եւ այն ալ այն- պիսի պահու մը , երբ պ. Ա. Վոսաժեանի հետ դաշնակցական հրապա- մակային հանգանակութեան ժողովին ատենախօսելու կերթար , հապա՞ դաշ- նակցական գործիչներու վրայ եղած յարձակումները . անոնց չափ ու սահման չըկայ , եթէ ես անոնք մէ- կիկ մէկիկ թուելու ըլլամ հոս , պէտք է ուրեմն անպատճառ սրեւակ- ներ գրաւել . բայց չէ ես այդ չափ- տի ընեմ , որովհետեւ ես քաջ գի- տեմ թէ «Շարժումի կշիւը այդպիսի տխուր դէպքերով զբաղուելու համար շատ սուղ են : «Հայրենիք» խմբա- գիր պ. Ա. Վոսաժեան , այն սրտի ըզ- գացումի վե՛ն երիտասարդը , ինչ տե- սակ յիմար յարձակումներ չը կրեց Ամերիկայի ալլիսիստներու պատե- ընէ , բայց նա բնաւ թուէ մը անգամ կանգ չստաւ , չընկրկեցաւ , մղկց իր պայքարը եւ այդ ալլիսիստ պե- տերը իրենց իսկական գոյնով հրա- պարակ գրաւ , ու այսօր յաղթանակ տարաւ , բարոյապէս :

Ամերիկայի մէջ Հ. Յ. Դաշնակցու- թիւնը կանգնած է այն բարձրու- թեան վրայ , ինչ որ պէտք էր ըլլար .

—Տգեւտ ու անկիրթ էակներու բազմ- մասարր զանգուած մը , դարաւոր անչարութեան ու թանձրագոյն խա- ւարի մէջ թրծուած , որ իր բոլոր բնատուր կարողութիւնները կը վատ- նէ ու եւ նիւթական դիրք մը ձեռք բերելու համար , առանց գործ դրած միջոցներուն մէջ խարու թիւն գնե- լու : Իսկակայս ինչ ընտանիքներէ , ուր հօր արիւրապետութիւնը մինչեւ բնակակուրթեան կը հասնի և ուր ի- րը մուս չի գործեր երբէք , ուր լոկ մէկ կամք միայն կ'ըլլէ , մէկ ինքը , մէկ համոզմունք :

Հայուն համար հասարակութիւն ըստած մարմինը գոյու թիւն չունի , ինքզինքը հայ կը կոչէ ոչ թէ հայ հա- սարակութեան պատկանելուն համար , այլ , ինչպէս տեսանք , հայ դաւա- նանքին , իրեն համար ամէն նպատակ ու ամէն սկզբունք եւսակառուցեան մէջ կը կայանայ : Անիկա չի գիտեր ու չի հասկնար հասարակութեան նուր- թելու պէտքը , իր անձին դուրս չս- հողութեան պէտք չի զգար : Այս տե- սակ հասարակութիւն մը բնականա- բար կըստանէ կեանքը , զայն մեռե- լու կեանք կը մատնէ : Անպատճառը հայ հասարակութեան մեծ գա՛նգու- ծին ներկայացուցած ողորմելի կացու-

թեան : Ուսու՛մը , գիտութիւնը աւե- լորդ զարգարանք մը կը նկատէր , որ կեանքի սովորական պէտքերուն մէջ օգտակարութիւն չեն կրնար ունե- նալ : Ուստի չէր ուզեր անոցմով զբա ղիլ , եւ կամ կըստաւոր որ ազգասիր ուսումնականներ գային ու ձրիարար մասնագիտարարն զայն իրեն : Այս անտարբերութեան արդիւնքն էր հայ լրագրութեան եւ գրականու- թեան ողբալի դրութիւնը :

Մեր մէջ հայերէն լրագիր կամ գիրք հրատարակողները չեն կրնար նոյն իսկ այսօր իրենց այդ աշխա- տութեամբն ապրելու , որովհետեւ մեր հասարակութիւնը այդ կարգի աշխատութեանը համար զբամ չի տար , եւ ոչ միայն չի տար , այլ կը կարծէ թէ ազգասէր լրագրագիտը կամ հեղինակը պարտաւոր է իր աշ- խատութեան արդիւնքը ձրիբարար տարու ամէն հայ անհատի : Իսկոյն- կան անհատութեան այս ստորձեւը գեղ մասամբ միայն բարձրացած է մեր հասարակութեան մէջ . մեր ար- տասանմանեան մամուլը ամէն օր պատկան կը յայտնէ իր լրագրագի- տներուն անտարբերութեան եւ ձրի- տակրութեանն , որոնցմէ շատերը լրագրին մէկ քանի տարեկան բաժ-

նեցիկը առանց խղճահարութեան կե- րած են : Թերթերը այդ կարգի ան- ձերու անուններն ալ հրատարակե- ցին , բայց որքա՞ն ազդեցութիւն ը- րաւ ան . խմբագիրները թերտաւատ են այդ մասին : Այ միտայն լրագրու- թեան , այլ հասարակական ամէն գործերու մէջ հայ ձրիակերութիւնը կը սիրէ . խմբագիրը կը գօտարանայ իր յօդուածագիրները վարձատրելու , թաղականները ձրի կամ աժան ուսու- ցիչներ կը փնտռեն շարունակ , ա- ռանց օրակը փնտռելու : Ու երբ վը- ճարեն , կը կարծեն որ բարութիւն մը կը ընեն , որոնց համար երախտա- գիտութիւն կըստասեն : Մեր հա- սարակութիւնը կը նմանի այն հա- րուստին , որ իր գաւակներուն հա- մար ամն դաստիարակ մը կը վարձէ ու կը պարծենայ թէ բարերարու- թիւն կը ընէ կոր , հաց տալով անոր : Իսկ ինք երբէք չի հաւատար որ դաս տրարակն ալ փոխադարձաբար իրեն բարութիւն կընէ , քանի որ իրեն տղաքը կը կրթէ : Ասկէ զատ , կը պահանջէ որ , դաստիարակը այդ աշ- խատութիւնը ձրի կատարէր . անոր աչքին առջեւ ուսուցչին աշխատանքը հազիւ քանի մը ֆրանք կարժէ . ան բնաւ չի հասկնար որ , ուսուցիչը

մինչեւ իր ուսման պաշարը հաւաքելը շատ աշխատանք , շատ աչքի լոյս , զուցէ շատ ալ դրամ վատնած է , իր առողջութեանն տուած է . առո՞ք ո եւ է նշանակութիւն չեն կրնար ու- ռենալ հայ հասարակոր հարուստներու համար , որ միմիայն զբամի պաշտա- մուքներն նուիրուած են : Այս կիծա- կին մէջ էր հայ հասարակութիւնը , երբ Արժուոյն օտք կը զնէր հայ հը- րապարակագրութեան վրայ : Ինչպէս տեսանք , անիկա լրջօրէն ըմբռնած էր այդ աշխատեցած հասարակութեան անմիջական պէտքերը : Հասարակու- թեան մը վրայ երկու միջոցով կարե- թէ ազդել , մեծերու վրայ մամուլով , իսկ ապագայ սերունդը կազմող փոք- րիկներու վրայ գնատարակութեամբ : Ուստի Արժուոյն հրապարակ իջնե- լուն պէս , ամենէն առաջ այդ երկու խնդիրները շոշափեց :

Ինչ կը պահանջէր Արժուոյնի ազ- գային դաստիարակութեան համար ,

(Շարունակելի)



երկիր Դաշնակցութեան գործունէութիւնը քննադատող, անոր հակառակող ու նոյն իսկ հայհոյող երիտասարդները, այսօր անոր սր. դրօշին տակ զինուորագրուած են եւ կը զինուորագրուին հետզհետէ. այն գաղութները ուր դեռ երկէր զաշնակցական կազմակերպութիւն չկար, եւ կամ զաշնակցութիւնը հոն մուտք գտած չէր, այսօր անոնք իրենք են որ ինքնաբերաբար կուգան կը միանան եւ կազմակերպութիւն կը հաստատեն, եւ կայ ուրիշ աւելի ուրախալի երեւոյթ մը, Տիկիները սկսած են շարժիլ եւ իրենց փոքրիկ լուծան միացնել խոսնել Դաշնակցութեան հետ. հայ մայրերը իրենց անուանով կօրիտէներ կը կազմեն, այսպէս Նիւ Եօրք, Վէսթ փուլմըն եւ Ֆիլատէլֆիա:

Արժարաններու այս իրարանցումը արդէն ինքնին շատ բացորոշ է մեզի համար. թող անոնք հայհոյեն, վարկարկեն հայկական դատին պաշտպան օտար բարեկամները, բայց Դաշնակցութիւնը զիտէ գնահատել անոնց համեստ ջանքերը: Դաշնակցութեան համար շատ ու շատ բարձր հայրենասէրներ են Բիստ մը եւ կամ Փրէսանսէ մը, օտար ըլլալով հանդերձ, քան Սուրէն Պարթեւեան մը եւ կամ Արշակ Զօյանեան մը: Ու ինչ զարմանալի բան, եղբայր, մէկ կողմէն Դաշնակցութեան կը հայհոյեն, միւս կողմէն անոր հետ միանալ կուզեն, ճիշդն ըսելով՝ մենք մինչեւ օրս չկրցինք հասկնալ թէ ինչ է որ կընեն: մէկ կողմէն զաշնակցութեան հայհոյել, միւս կողմէն անոր հետ միանալ ցանկալ, ըստիս սջօլու չօճուխներու» բան գործ է, Դաշնակցութեան հայհոյելով եւ կամ անոր անխոնջ գործիչները վարկաբեկելով չէ որ պիտի կրնան անոր հետ միանալ, Դաշնակցութիւնը բնաւ ինքզինք թոյլ չկրնար տալ այսպիսի քաներու. որովհետեւ ամբողջ հայաստան մը իր արցունքոտ աչքերով անոր կը նայի, եւ իր միակ յայտ ու ապաւէնը Դաշնակցութիւնն է:

Նորուանդ Պոյանեան

### ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՔՈՒՍՆԵՐ

Կ. Պօլսէն Ապրիլ 15 թուականաւ կը հեռագրեն «Սայտ»ին. «Պատերազմական նախարարութիւնը հեռագրակու լուր ստացաւ, թէ զէպի Սասուն զրկուած 16 գունդերը յաջողած են հայ յեղափոխական խումբերը պաշարել: Կըսպատուի եղբոր արիւնքի ընդհարում մը»:

Այս լուրը կը փաստէ թէ Սուլթան Համիտ եւ ու զէպի մէջ կը գրտնուի այս տարի Սասունը խորտակելու համար:

Մենք կը հաւատանք թէ Սասունի հերոսները ամեն ճիգ պիտի թափեն ընդհարումէ խուսափելու, իսկ եթէ թուրք զօրքերը նախարարակ ըլլան, անշուշտ հոն համախմբուած եւ իրենց քաջութեամբ արդէն հաշակուած քաջ Սասունցիներուն հետ պիտի կըռուին քաջարար:

Սասունէ հասած տեղեկութիւններուն համաձայն Անդրանիկը

այդ կողմերը ամուր գիրք բռնած բոլորովին տրամագիր չէ անձնատուր ըլլալ:

Թուրք զօրքերը կը պատրաստուին զայն պաշարել:

— Ապրիլ 4ին Բիթլիկի վայրին կը հաղորդէ թէ հայ Երեսօպետ Անդրանիկ չէ ընդունած Մուշի առաջնորդի առաջարկները ըստ որում որոշ պայմաններու համաձայն անձնատուր պիտի ըլլար: Բացի այդ հայկական ապստամբութեան շարժումները հրամանատարը Գեղջի Օսմանի մէջ հրդեհներ է երեք քիւրա եւ հայ բնակիչներ ունեցող գիւղեր, որովհետեւ հայ բռնակիչները չեն ուզած միանալ Անդրանիկին:

Անդրանիկի խմբերէն մէկը յարձակուի Բիթլիկէն 4 օր հետոս գտնուող գիւղի մը վրայ ըսպաններ է 30 մահմետականներ:

Օրմանեան պատրիարքը Սուլթանէն հրաման ստացեր է ան գամ մը եւս, Սուլթան առաջնորդի միջոցաւ աշխատի համոզել Անդրանիկը հտ կենալ այդ տեսակ գործերէ:

### ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐՔԻ

#### ՌՈՒՍ—ՃԱՐՔՈՒՍԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

«Բիթրօքալուք» շրահաւորը կործանուեր է ճարտական թորփիլանտերու հարուածներէն եւ անոնց դրած ականներէն:

— Մաքարովի կորուստը ճարտիայի մէջ եւս մեծ յուզում յառաջ բերեր է. ճարտարները մեծ ցաւ կըզգան հերոս ծովակալին մահուան առթիւ:

— Ճարտարները կրկին յարձակում գործեր են Բորթ-Արթուրի վրայ, եւ ինչպէս հեռագրիւնները կը հաղորդեն կրցեր նաւահանգստին մուտքը գոցել, ատկէ վերջ ցամաք զօրք են իջեցուցեր, այնպէս որ Բորթ-Արթուրը չորս կողմէն պաշարուած է:

— Ներսիսեան թերթերը կը հաղորդեն որ Բիթրօքալուքի ըսպայակոյտի վարչութիւնը այլեւս յոյս չունի Բորթ-Արթուրին գրամախուսելու վրայ:

— Ռուսական աղբիւրներէ կիւմացուի որ ճարտարները Եսլու գետի քով յաղթուեր են անոններէն, 6000 զոհ սալով. բայց այս լուրը զեւ ստուգուած չէ:

— Մինչեւ օրս Ռուսական հետեւեալ զրահաւորները ոչնչացած կամ խիստ վնասուած են. Բիթրօքալուք, Բորեւա, Սարեվիչ, Ռէթվիզան, Պալադա, Վարեպ, Բորեւց, Ենիսի, Վնուշիտէլի, Ստրէզուչի, Բեզտարաչի, Բույեարի, Պալմազա, Վնասուած եւ նորոգուած են Նովիկ, Յակօլդ եւ Դիանա:

### Թ Ո Ւ Ր Ք Ի Ս

Մակեդոնական երեք նահանգներէն եւ Էտիրնէէն եկած տեղեկութիւններու համաձայն ընդհանուր ներումը արդէն կը գործադրուի: Ներումը պուլկարները կը զրկուին իրենց զիւղերը եւ հոն հաւատարմութեան երթում տալով սղատ կարճակուին: Իսկ իշխանապետութեան հպատակ պուլկարները հակոպութեան տակ մինչեւ սահմանադրու իր կողմէն գործուին եւ անկէ կը յանձնուին պուլկար իշխանութեանց:

— Բիթլիկայի հրոսակալին կըռուները անցեալ տարի զեկալուրող զիւսուորներ Գրուէլ, Լօզանչէլ եւ Սուգարէլ շիրմի փաշայի Երոպացի օգնականներու միջոցաւ ցանկութիւն յայտնած են անձնատուր ըլլալ: վերջիններս ներում պիտի ընդունին բայց երկրէն պիտի արտաքսուին:

— Բիթլիկայի մէջ թուրք եւ պուլկար լեզուով պաշտօնական յայտարարութիւն փակցուած են պատերը. որոնցմով կը հաշակուի Սուլթանի ներման հրամանը, իրեն պայմաններովը միասին:

### ՌՈՒՍԻԱ

Բարիկ թերթերը կը հաղորդեն թէ շարժումը Սօքրիտով, որ Մաքարովի փոխանորդ նշանակուած է, շուտով Բորթ-Արթուր պիտի մեկնի:

— Ներսիսեան թերթերը կը հաղորդեն որ Սարը վերջնապէս որոշած է պատերազմի դաշար երթալ:

— Անգլիական «Ուորլու» թերթի խմբագրապետը տեսակցութիւն ունեցեր է Սարին եւ շատ մը նշանաւոր ուսուցիչներ հետ, որոնք ամենքն ալ համոզում յայտներ են որ Ռուսիա պիտի յաղթէ:

— Լեհական նահանգներու մէջ խլրտուածներ կը նկատուին, Լեհացիք արդէն սկսի են մեծ քաղաքներուն մէջ ցոյցեր բնել:

— Գերմանական թերթերը Բիթրօքալուքի կիմանան թէ համախարանի բրօքէսօրներէն մին Գասախօսած ատեն յայտարարած է որ ճարտի ընկալութիւնը շատ խիտ է. մեծ արդիւնաբերութիւնը շատ զարգացած եւ ատոր համար ալ ճարտ նոր շուկաներու պէտք ունի: Պատերազմը անոր համար մեծ նշանակութիւն ունի, այնինչ Ռուսիոյ համար միայն զժբախտութիւն է: Յամենայն զէպս այդ պատերազմը նշան է Ռուսական ներքին բարենորոգումներու: Պահպանողական ուսանողներու կողմէն մատնուելով Եասնօպուքին իսկոյն պաշտօնէ կարճակուի. իսկ ազատամիտ ուսանողները գրգռուելով կը պահանջեն բրօքէսօրին վերադարձը:

եւ լրտես ուսանողներուն համախարանէն արտաքսուած:

— Մանուանգ արուստագիտական բարձ. դպրոցի ուսանողներուն գումարումը շատ բուռն եւ զած է. խուզարկումներ եւ ձերբակալումներ կան:

Ներքին գործոց նախարար Իլէվէի գէթ սպանութեան փորձը եղբոր է անյաջող վերջնացրու: — Մոսկուէն Պիլիին կը յայտարարեն որ Մուսկուա— Բիթլիկ պուլկազոց վակօններէն միայն մէջ գտնուած է երկու արիւնք ծրարներ, զորս բանալով գտնուեն զատարաններու գանցել Բիթլիկովի գլուխը եւ գիւղեր:

### ՍՐԱՀ ՍՍԷՏԻՆԵՆԻԷ

Նատէժտա» հայ դերասանական խումբս վաղ գիշեր պիտի ներկայացնէ Տ. Վ. Պապեանի առաջնորդութեամբ:

- 1. «ԱՆՁՆԱԶՈՂՆ»
- 2. արար թատերգ. 3 արար: Երգ եւ պար
- Օրք. Ռէքէկայի եւ Օլիայի կողմէ
- 3. Պարք ամբողջ խմբի կողմէ
- 4. Հովիք եւ Հովուուհի
- Տրք. Պապեան, Յակոբեան և օր. Վեհանուշի կողմէ
- 5. «ԱՆՆԵՆԵՐԸ» 2 արար

Խիստ ծիծաղալար քաւեա կատակերգ. Հաճի Յակոբի եւ ամբողջ խմբի կողմէ

Փորձի դրուած է Սերպիոյ Թագաւոր եւ Թագուհոյն սպանուելը եւ օլէպէպիսի Հօր-Հօր աղա»

### ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

#### ԲԱՌԱՐԱՆ

ՊՈՒԼԿԱՐԵՆ-ՉԱՅԵՐՆ-ՏԱՃԿԵՐԻՆ Կը բաղկանայ 592 երեսներէ, պարունակելով մօտ 30,000 բառեր և ոճեր:

Ըն իր քուրք մտքուր սպարտիկ Շիկ կազմ

Սկզբը, բացի յաստաբանէն, ունի քերականական կարեւոր գիտելիքներու եւ կանոններու ամփոփումը (40 երեսի չափ): Մէկ խօսքով բարարան մը որ իր պարունակութեամբ եւ իր չափաւոր գնովը ամենէն յարմար օժանդակը կը հանդիսանայ պուլկարներէն ընդունող վաճառքողներուն զառակարգի մարդոց, թէ ուսանողին, թէ վաճառականին եւ թէ պայք արհեստաւորին:

#### ԳԻՆ 5 ՅՐԱՆԻՔ

Դիմել հեղինակին Աւասուր Մկրտիչեան Սօփիա

#### Ա. Չ. Դ.

Պօստը Խասպուրցի 30-35 տարեկան, թխուղ միջահասակ, սեռահեր, մանիֆաթու բաճի Միրզան թաւշանեան Պանթի ցոյցի ատեն Եղիպտոսեկնելով, մինչեւ հիմայ իր վրայ եւ լուր չէ անուած, ուստի իր վերայ ստեղծութիւն ունեցող ազգայիններէ կը խնդրուի. իմացնել ժամագործ Տիգրան Միսասեան, Տօպիլ Պուլկարի) հասցէին:

#### ՕՏՎՈՐՈՒՆԷՅ

Мурадъ-Ераносянъ

Печатьница „Взаимность“ Варна